



Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՆՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Թարգմանչաց վանքը հայոց հինավուրց վանքերից մեկն է՝ հիմնադրված 989 թվականին պատմական Արցախի Խաչակապ գյուղի մոտ (Գանձակի վիճակ): Չնայած իր պատկառելի հնությանը, դժբախտաբար գրավոր շատ քիչ բան է հասել մեզ. նույնիսկ չեն պահպանվել գրատան գրչագիր մատյանները:

Վանքի գրատան և սուկա ձեռագրերի մասին եղած բոլոր տեղեկությունները վերաբերում են 19-րդ դարին, որոնց և անդրադառնում ենք ստորև:

1. Սարգիս Ջալալյանց, Ճանապարհորդությունն ի Մեծն Հայաստան, հատոր Ա, Տփլիս, 1842—Իր սույն գրքում Ջալալյանցը՝ խոսելով Թարգմանչաց վանքի գրատան մասին, գրում է. «Նշեալ են ի մա բազում երևելի ձեռագիր մատենանք, բայց լանզգուշութենէ բնակեալ միաբանից լանշարժութեան մնացեալ՝ մատնեալ են սպականութեան, և սպա թաղեալ են ի սիրտ երկրի ի նշան մեծի յարգանաց ըստ ոսկական մտաց ևնցա...» (էջ 168—169): Այնուհետև խոսում է վանքում սուկա հետևյալ երկու ձեռագրերի մասին (պայմանականորեն №№ Ա և Բ):

№ Ա (էջ 167—168)—«Աւետարան»: Տալիս է Սյունչաց Գրիգոր իշխանի և նրա կնոջ՝ Ասափի 2ԿԱ. (1312) թվակիր հիշատակագրությունը:

№ Բ (էջ 168—169)—«[Ժողովածոյ] յորում էր գրուած [Պատմութիւնք] Թովմայի Մեծօրհնոյ, Սկրաստայ Յոյն պատմագրի,

Միքայէլի Ասորոյ, Մաղաբեայ Արեղայի, Թղթակցութիւն Դիոնէսիոսի Արիսպագացոյ ընդ աւետարանչին Յօհաննու, Հարց ժողովոյն անուանեալ, Թուղթ Ակակա հայրապետին Պետրոսի, և քանի մի Կանոնք: Գտաւ սատ և Պատմութիւն անցից Գօշ Մխիթարայ»:

Վերջին ձեռագրի մասին Ս. Ջալալյանցը նշում է, թե ինքն այն վերցրել է վանքից: Որքան և ցալալի, սակայն նման մատյան, որ նշված բոլոր նյութերը միասին պարունակեր իր մեջ, մենք չենք գտնում ոչ միայն Ջալալյանցից ժառանգած և Մատենադարանում սուկա 81 ձեռագրերի շարքում, այլև Մատենադարանի մյուս ձեռագրերի մեջ ընդհանրապէս:

2. «Յիշատակարանք ձեռագիր Աւետարանաց վիճակին Գանձակու, արտագրեալ յամին 1885—Սույն անհեղինակ և անտիպ ցուցակում, որը պահվում է Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների Մագիստրոսի ֆոնդում, ի թիվս Գանձակի վիճակի եկեղեցապատկան այլ ձեռագրերի, 5 և 6 թվահամարների ներքո արձանագրված են Թարգմանչաց վանքի հետևյալ երկու ձեռագրերը.

№ 5. «Աւետարան», ժամանակ՝ ՌԾԱ. (1652), գրիչ՝ Գրիգոր քհյ. Բիրականցի, ստացող՝ Սարխօշ քրիստոնեայ Վարդեմիցի:

№ 6. «Աւետարան», ստացող՝ Գրիգոր և կին իւր՝ Ասափ, 2ԿԱ. (1312):

Այս գույգ ձեռագրերից սուաջինը (№ 5) Ս. Զալալյանցը չի հիշատակում, իսկ երկրորդը (№ 6) Զալալյանցի № Ա ձեռագիրն է:

3. Մակար եպս. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895—Մակար Բարխուդարյանցը իր սույն գրքում Թարգմանչաց վանքից արձանագրել է միայն մեկ ձեռագիր (էջ 289—291), որը նույնական է Ս. Զալալյանցի հիշատակած № Ա և 1885 թ. ցուցակի № 6 ձեռագրի հետ: Այսպես.

№ [Ա]. «Աւետարան», գրիչ՝ Տիրացու, ստացող՝ Գրիգոր որդի Դովիհն, 24Ա (1312):

4. Երվանդ Լալայանց, Գանձակ («Ազգագրական հանդես», 1899, էջ 800)—Ե. Լալայանցը իր սույն աշխատության մեջ թարգմանչաց վանքի ձեռագրերի մասին արձա-

նագրել է հետևյալը. «Վանքում կան երեք ձեռագիր Ավետարաններ (պայմանականորեն №№ Ա, Բ, Գ), որոնցից մինը հիշատակ է Գրիգոր Սյունյաց իշխանի, 1312 թվին...»:

Առաջին Ավետարանը, որի մասին Լալայանցը ոչ մի լրացուցիչ տվյալ չի հաղորդում, չեն հիշատակում նախորդ աղբյուրները, երկրորդ Ավետարանը, որը նույնպես մատենագիտական տվյալներ չունի, հավանաբար 1885 թ. ցուցակի № 5 ձեռագիրն է, իսկ երրորդ Ավետարանը՝ նույնական է Զալալյանցի № Ա, 1885 թ. ցուցակի № 6 և Բարխուդարյանցի № Ա ձեռագրի հետ:

Այսպիսով Թարգմանչաց վանքի ձեռագրերից ստ այսօր հայտնի է եղել չորսը: Այդ չորս ձեռագրերից Մաշտոցի անվան Մատենադարանում է գտնվում միայն մեկը (տե՛ս կից տախտակը):

Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ա Կ Ա Ն Տ Ա Խ Տ Ա Կ
Թ Ա Ր Գ Մ Ա Ն Չ Ա Ց Վ Ա Ն Ք Ի Չ Ե Ռ Ա Գ Ր Ե Ր Ի
Հ Ի Ն Ե Վ Ն Ո Ր Թ Վ Ա Հ Ա Մ Ա Ր Ն Ե Ր Ի

№№ ը/կ	Զալալյանց 1842	1885 թ. ցուցակ	Բարխուդարյան 1895	Լալայանց 1899	Մատենադարան
1	Ա	6	Ա	Գ	2743
2	Բ	—	—	—	—
3	—	5	—	Բ	—
4	—	—	—	Ա	—

